ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Դաղբաշյան

«31» օգոստոսի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզի Վանաձոր քաղաքի

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց, 7- րդ Ա դասարան

Դունամալյան Արմինե Սերյոժայի

« 2023- 2024 » ուսումնական տա

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

6-րդ «ա» դասարանում սովորում էին 34 աշակերտ՝ 16 աղջիկ, 18 տղա: 7-րդ դասարանում արդեն սովորում են 32 աշակերտներ՝ 16 աղջիկ, 16 տղա: 1 աշակերտ տեղափոխվել է Վանաձորի թիվ 7 դպրոց, 1 աշակերտ՝ Վանաձորի <<Էվրիկա>>դպրոց:
Դասարանում սովորում է ԿԱՊԿՈՒ մեկ աշակերտ՝ Միտիչյան Լարիսա: 6-րդ դասարանում բոլոր աշակերտները գնահատվել են: Գերազանց առաջադիմություն են ցուցաբերել չորս աշակերտներ՝ Դարբինյան Գոռ, Կարապետյան Կամո, Ոսկանյան Վահագն, Պարոնյան Օլյա, 9 հարվածային: Դասարանում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Կոնֆլիկտային իրավիճակներ չեն առաջանում, կարողանում են շատ արագ հաղթահարել առաջացած խնդիրները: Ընկերասեր են, հանդուրժող և կարգապահ, պատրաստակամորեն կատարում են ուսուցչների հանձնարարությունները, օգնում միմյանց, մասնակցում տարաբնույթ միջոցառումների:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կրկնել նախորդ տարվա մրցույթը, քանի որ այն արդյունավետ էր, այն է. շարքերի միջև կազմակերպել առաջադիմության մրցույթներ, ամիսը մեկ անգամ որոշել հաղթող շարքը, խրախուսել գովեստի խոսքերով, կ յուրաքանչյուր կիսամյակի վերջում հաղթող շարքին պարգևատրել:

Այցելություն արտադրամասեր:

Կատարել նախագծային աշխատանքներ տարբեր առարկաներից:

Մասնակցել ԿԶՆԱԿ հիմնադրամի կազմակերպած տարաբնույթ նախագծերին:

Դասեր վարել թանգարաններում (օրինակ՝ գրականության դաս՝ Ստեփան Զորյանի հարկի տակ):
Հանդիպումներ կազմակերպել ժամանակակից գրողներից կամ գրականության դասագրքի համահեղինակներից մեկի հետ:

Ուսումնական տարվա ընթացքում իրականացնել անձի համակողմանի և ներդաշնակ դաստիարակությունը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Կանխել անհարկի ուշացումներն ու բացակայությունները:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Այցելել եկեղեցիներ, զրուցել քահանաների հետ: Կարդալ հատվածներ Աստվածաշնչից, Նարեկացու մատյանից, քանի որ արժեքային համակարգի ձևավորման և մշակութային ժառանգության փոխանցման համար շատ կարևոր է հոգևոր դաստիարակությունը:Դասղեկի ժամերին անցկացնել զրույց-զեկուցուներ քրիստոնեական պատմությունից: Ծանոթացնել եկեղեցական տոներին: Աշակերտին քրիստոնյա մեծացնելու, հոգևոր ժառանգությունը փոխանցելու համար առաջին հերթին պետք է հաշվի առնել նրա մտածողության, երևակայության, բարոյական առանձնահատկությունները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ամեն ինչ սկսվում է սեփական շրջակայքից: Աշակերտները պետք է առաջին հերթին ձևավորեն իրենց դասասենյակը: Գեղագիտական դաստիարակություն կարևորագույն խնդիրն է երեխային սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնել հոգևոր հարստություն, բարություն և գեղեցիկի մեջ դրսևորվելու, գեղեցիկը արարելու կարողության ձևավորում:
Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցեր մշակութային օջախներ:
Քննարկել ֆիլմեր, բեմականացումներ և գրքեր:
Ստեղծել դասարանական գրադարան, բույսերի անկյուն, ձեռքի աշխատանքների փոքրիկ ցուցահանդես:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Դասրամում ունենք Զոհված հրամանատարի դուստր՝ Անգելինա Կորյունի Վարդանյան, և զոհված ժամկետային զինծառոյողի քույր՝ Քարամյան Ալլա: Հենց նրանց ներկայությունն արդեն հայրենասիրության դաս է: Դասարանում անկյուն ենք նվիրել 44-օրյա պատերազմի հերոս Ստեփանյան Հովհաննեսին: Երբեմն մեկ պաստառն ավելին է ասում, քան հազարավոր խոսքեր:
Պարբերաբար զրույց անցկացնել հայրենասիրության, հայ հերոսների ու նրանց գործի մասին :
Նշել Անկախության օրը, Հայոց բանակի օրը: Ուսումնական նյութին զուգակցել հայրենասիրական երգերի ուսուցումը:
Դասղեկի ժամերին հրավիրել պատերազմների մասնակից մեր շրջանավարտներին, նրանց պատմել մեր զոհված շրջանավարտների մասին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Դասարանում ունենք դպրոցի սպորտլանդիայի խմբակի մասնակից աշակերտներ, որոնք մասնակցել են հաղթական խաղերին:
Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել աշակերտների ճիշտ կեցվածքն ու նստելաձևը, անցկացնել միջդասարանային սպորտային միջոցառումներ,սպորտլանդիաներ,դասի ընթացքում կազմակերպել ֆիզկուլտդադարներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Մասնակցել դպրոցում կազմակերպվող շաբաթօրյակներին, դպրոցի բակի կանաչապատման աշխատանքներին: Հետևել կարգուկանոնին, դասարանի մաքրությանը: Զարգացնել աշակերտների մանր մոտորիկան, բնական և արհեստական նյութերով պատրաստել հավաքածուներ: Սովորեցնել աշխատանքային գործիքներով անվտանգ ու հեշտ աշխատել:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Մասնակցել դպրոցում կազմակերպվող գարնանային ծառատունկին ,կազմակերպել սենյակային բույսերի խնամքը:Պարբերաբար զրույց անցկացնել բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերելու մասին,պատմել բուսական ու կենդանական աշխարհին սպառնացող վտանգների մասին:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ծնողներին մասնակից դարձնել դպրոցական կյանքին,յուրաքանչյուր ուրբաթ հայտարարել ծնողների հետ հանդիպման օր/ թեկուզ օնլայն հարթակների միջոցով/ :
Ծնողխորհրդի հետ կազմակերպել տնայցեր հետ մնացող և հաճախակի բացակայող աշակերտների տուն:
Հայտնաբերել և օգնել սոցիալապես անապահով ընտանիքի երեխներին:
Աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողին ու նրանց ընտանիքներին:
Նպաստել սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը:
Ամրապնդել դպրոց-ընտանիք կապը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Ակնկալիքների սանդղակ	09	դասղեկ,աշակ.
II	Վ.Համբարձումյանի 115-ամյակը	09	դասղեկ,աշակ.
III	Անկախության օր: Վերհիշել ՀՀ կազմավորմանը,պետական խորհրդանշաններին	09	դասղեկ,աշակ.
IV	Պատերազմը և իմ դպրոցի հերոսները	09	դասղեկ,աշակ.
V	Թարգմանչաց տոն	10	դասղեկ,աշակ.
VI	Իմ համայնքի հիմնախնդիրները	10	դասղեկ,աշակ.
VII	Կլիմայական փոփոխություններ.	10	դասղեկ,աշակ.
VIII	Նվազեցնենք ածխածնի հետքը	10	դասղեկ,աշակ.
IX	Հիշենք՝ պլաստիկը, ապակին և թուղթը աղբ չեն	11	դասղեկ,աշակ.
X	Կրճատենք թափոնները	11	դասղեկ,աշակ.
XI	Խնայենք ջուրը	11	դասղեկ,աշակ.
XII	Արտակարգ իրավիճակներ և անձի պաշտպանություն	11	դասղեկ,աշակ.
XIII	Արտակարգ իրավիճակներ և անձի պաշտպանություն	12	դասղեկ,աշակ.
XIV	Պարույր Սևակի հետքերով	12	դասղեկ,աշակ.
XV	Սևակի դիմանկարը	12	դասղեկ,աշակ.
XVI	Ամանորի հրաշքը	01	դասղեկ,աշակ.
XVII	Պարույր Սևակ- 100	01	դասղեկ,աշակ.
XVIII	Նրանք ապրում են մեր սրտերում	01	դասղեկ,աշակ.
XIX	Պոեզիան իմ կյանքում	02	դասղեկ,աշակ.
XX	Ընթերցանության շաբաթ. Պարույր Սևակ «Որդուս»	02	դասղեկ,աշակ.
XXI	«Խարույկ սառույցի վրա ֆիլմի դիտում, քննարկում»	02	դասղեկ,աշակ.
XXII	Արվեստն իմ հոգում	02	դասղեկ,աշակ.
XXIII	Մեդիագրագիտություն	03	դասղեկ,աշակ.
XXIV	Ճիշտ եւ կեզծ լուրեր	03	դասղեկ,աշակ.
XXV	Գույնի խորհուրդը	03	դասղեկ,աշակ.
XXVI	Այցելել պատկերասրահ	03	դասղեկ,աշակ.
XXVII	Մեկ ազգ, մեկ եկեղեցի	04	դասղեկ,աշակ.
XXVIII	Ուխտագնացություն	04	դասղեկ,աշակ.
XXIX	Եկեղեցական տոներ	04	դասղեկ,աշակ.

XXX	Եղեռնազարկ իմ ժողովուրդ	04	դասղեկ,աշակ.
XXXI	Իմ դպրոցի հերոսները	05	դասղեկ,աշակ.
XXXII	Մայիսյան հերոսամարտեր	05	դասղեկ,աշակ.
XXXIII	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին	05	դասղեկ,աշակ.
XXXIV	Ճանաչենք մեր երկիրը (էքսկուրսիայի նախապատրաստում)	05	դասղեկ,աշակ.

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը		Ծանոթություն
09.2023	Ակնկալիքների սանդղակ	
09. 2023	Վ.Համբարձումյանի 115-ամյակը	
09. 2023	Անկախության օր: Վերհիշել ՀՀ կազմավորմանը,պետական խորհրդանիշներին	
09. 2023	Պատերազմը և իմ դպրոցի հերսները	
10. 2023	Թարգմանչաց տոն	
10. 2023	Կլիմայական փոփոխություններ	
10. 2023	Նվազեցնենք ածխածնի հետքը	
10. 2023	Հիշենք՝ պլաստիկը, ապակին և թուղթը աղբ չեն	
11. 2023	Կրճատենք թափոնները	
11. 2023	Խնայենք ջուրը	
11. 2023	Արվեստն իմ հոգում	
11. 2023	Արտակարգ իրավիճակներ և անձի պաշտպանություն	
12. 2023	Արտակարգ իրավիճակներ և անձի պաշտպանություն	
12. 2023	Պարույր Սևակի հետքերով	
12. 2023	Սևակի դիմանկարը	
01. 2024	Ամանորի հրաշքը	
01. 2024	Պարույր Սևակ- 100	
01. 2024	Նրանք ապրում են մեր սրտերում	
02. 2024	Պոեզիան իմ կյանքում	
02. 2024	Ընթերցանության շաբաթ. Պարույր Սևակ «Որդուս»	
02. 2024	«Խարույկ սառույցի վրա	
02. 2024	ֆիլմի դիտում, քննարկում»	
03. 2024	Գարունը այնքան ծաղիկ է վառել	
03. 2024	Միջոցառում՝ նվիրված մայրերին	
03. 2024	Գույնի խորհուրդը	
03. 2024	Այցելել պատկերասրահ	
04. 2024	Մեկ ազգ, մեկ եկեղեցի	
04. 2024	Ուխտագնացություն	

04. 2024	Եկեղեցական տոներ	
04. 2024	Եղեռնազարկ իմ ժողովուրդ	
05. 2024	Իմ դպրոցի հերոսները	
05. 2024	Մայիսյան հերոսամարտեր	
05. 2024	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին	
05. 2024	Ճանաչենք մեր երկիրը (էքսկուրսիայի նախապատրաստում)	